ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 12.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/26

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.08.2017թ. թիվ 03/27-1/14260-17 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական պահպանության ծառայության 21.07.2017թ. թիվ 19/754 գրության հիման վրա, 04.08.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Պահապան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ ֆինանսների նախարարությանը լիազորված ներկայացուցիչ Արթուր Բաղդասարյանը:

2. **<u>ՀՀ պետական պահպանության ծառայության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պետական պահպանության ծառայությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 21.07.2017թ. թիվ 19/754 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Համաձայն ՀՀ պետական պահպանության ծառայության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.04.2017թ. կնքված N ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-03 պայմանագրի՝ մինչև 30.06.2017թ. «Պահապան» ՍՊԸ-ն պետք է մատակարարեր՝ ամենօրյա կիսաբրդյա գլխարկ, ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց, կիտել ամենօրյա և ազատթող փողքերով տաբատ, բաճկոն հանովի ուսադիրներով և ազատթող փողքերով տաբատ, կոստյում ձմեռային արհեստական մորթե օձիքով, երկարաթև սպիտակ վերնաշապիկ, կարճաթև սպիտակ վերնաշապիկ, կարճաթև դեղնականաչավուն վերնաշապիկ, կոստյում ամառային գունաքողարկված կտորից, կիսավերարկու, կեպի, ուսադիր ամենօրյա ենթասպայական կազմի համար, ուսադիր ամենօրյա հանովի և դնովի ենթասպայական կազմի համար, սակայն վերը նշված ապրանքները մատակարարվել են բազմաթիվ թերություններով, իսկ որոշ չափաբաժիններ ընդհանրապես չեն մատակարարվել (N1 արձանագրությունը 04.07.2017թ.):

Սույն թվականի հուլիսի 12-ին N 19/717 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին տեղեկացվել է, որ 18.07.2017թ.-ին պայմանագրով նախատեսված ապրանքների ամբողջ չափաքանակը թերությունները վերացված չմատակարարելու դեպքում պայմանագիրը միակողմանի կլուծարվի:

Սույն թվականի հուլիսի 13-ին և 17-ին մատակարարը նորից ներկայացրել է պայմանագրով նախատեսված ապրանքների ոչ ամբողջական քանակը և նորից թերություններով (N2, N3 արձանագրություններ, որոնք մատակարարը հրաժարվել է ստորագրել)»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին ՀՀ պետական պահպանության ծառայության

լիազորված ներկայացուցիչներ՝ Ալեքսանդր Առուստամյանը, Ժիրայր Կուպալյանը, Արա Ափոյանը և Կարեն Գասպարյանը:

3. «Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Պահապան» ՍՊԸ-ն 17.08.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ Պետական պահապանության ծառայության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.04.2017թ կնքված N ՀՀ ՊՊԾ- ՇՀԱՊՁԲ-15/10-01-3 պայմանագրի՝ «Պահապան» ՍՊԸ-ն բոլոր նմուշները ներկայացրել է մատակարարումից առաջ հաստատման, որը հաստատվել է ՊՊԾ-ի կողմից, բացի «ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց» ապրանքատեսակից, որովհետև պատվիրատուն այդպես էլ մինչև վերջ չկողմնորոշվեց, թե ինչ է ուզում, ինչ երանգի (իրենք ներկայացնում էին ՌԴ գլխարկի նմուշը), բայց մենք՝ առաջնորդվելով պայմանգրի տեխնիկական բնութագրով՝ նշված ապրանքատեսակը մատակարարել ենք հուլիսի 18-ին:

Առաջին մատակարարումը եղել է հունիսի 30-ին՝ ամբողջությամբ, բացի ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց, հունիսի 30-ին պատվիրատուի կողմից արձանագրվել է 2-3 ապրանքատեսակների մասով թույլատրելի սահմաններում աննշան խախտումներ, որը մենք պարտավորվել ենք շտկել:

Ինչ վերաբերում է արձանագրության մեջ «ամենօրյա կիսաբրդյա գլխարկների» վրայի ոսկեզօծ պարանին, ապա մենք մատակարարեցինք նշված ապրանքատեսակը համաձայն իրենց կողմից տրված նմուշի, սակայն մատակարարման օրը հրաժարվեցին ընդունել այն՝ ասելով, որ մենք սա չենք ուզում, չնայած, որ մենք այն մեծ դժվարությամբ և ժամանակի մեծ կորուստով էինք ձեռք բերել արտասահմանից, այս անգամ պահանջեցին այդ զարդապարանի փոխարեն մատակարարենք ոսկեզօծ մետաղյա զարդապարան, որը պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված չէր, ինչպես նաև նրանք պատճառաբանեցին, որ գլխարկանշանի գույները չի համապատասխանում իրենց պահանջած նմուշի գույներին՝ (իրենց կողմից տրամադրված գլխարկանշանի նկարը կցվում է) չգիտակցելով, որ ՀՀ հանրապետության զինանշանի գույները օրենքով

հաստատված և բոլորի համար պարադիր է՝ այսինքն նրանք նախկինում վերցրել են հակաօրինական և ոչ որակյալ բացահայտ թերություններով ապրանքներ:

Հուլիսի 13-ին մատակարարել ենք ամբողջ խմբաքանակը, սակայն նրանք բացարձակապես չէին ուզում նայել և ընդունել այն ապրանքներն անգամ, որոնք իրենց հանձնաժողովի կարծիքով անթերի էին, համապատասխանում էին տեխնիկական բնութագրի պահանջներին, ինչպես նաև իրենց կողմից հաստատված նմուշներին թե' որակով, թե' արտաքին տեսքով գտնվում էին գերազանց վիճակում:

Հասկանալի էր, որ նրանք արհեստականորեն առիթ էին փնտրում ապրանքը չընդունելու:

Հուլիսի 13-ին կազմված N2 արձանագրությունը չի համապատասխանում իրականությանը, որի համար մենք չենք ստորագրել, հասկանալով, որ միտումնավոր հող են նախապատրաստում ապրանքները չընդունելու, մինչև իրենց կողմից կանխամտածված տրամաբանական ավարտին հասցնելու՝ պայմանագիրը լուծարելուն: Սակայն «Պահապան» ՍՊԸ-ն մեկ անգամ ևս վերանայելով իր կողմից մատակարարվող ապրանքների որակը՝ համոզվելով, որ ամբողջ խմբաքանակը իդեալական որակի է, անհատական կարված՝ (ամբողջ հանրապետությունով անհատական չափսեր են վերցվել), հուլիսի 17-ին դարձյալ մատակարարեց առանձին հարկային հաշիվներով, նպատակ ունենալով, որ, եթե որևէ ապրանքատեսակ իրենց կողմից չընդունվի, գոնե մնացածը ընդունեն, բայց այս անգամ էլ անհիմն կերպով նույնիսկ չբարեհաճեցին ապրանքները բացել և ստուգել՝ չհիմնավորված արձանագրություն գրելով նորից հետ տվեցին, քանի որ վերջնաժամկետը տրված էր մինչև հուլիսի 18-ը:

Հուլիսի 17-ի մատակարարման ժամանակ մեր կողմից ստեղծվել էր հանձնաժողով այն արտադրամասերի վարպետներից, որոնք անմիջապես զբաղվել են այդ ապրանքատեսակների արտադրությամբ, որպեսզի մասնակցեն ընդունման-հանձնման աշխատանքներին, բայց ՊՊԾ-ում թույլ չտվեցին մտնել նույնիսկ դարպասներից ներս և մասնակցել ընդունման-հանձնման աշխատանքներին, անգամ կրկին չնայեցին ամբողջ ներկայացված խմբաքանակը: Մենք վերջնականապես համոզվեցինք, որ այս կազմակերպությանը ոչ թե ապրանքներն են հետաքրքրում, այլ ի սկզբանե դիտավորության միտում կար պայմանագիրը լուծարելու: Հուլիսի 18-ին ՊՊԾ-ի

տնտեսական մասի ղեկավարությանը հրավիրեցինք մասնակցելու ամբողջ ապրանքատեսակների ընդունման-հանձնմանը, ներկայացան, բայց թատերականացված տեսարան ստեղծեցին, իբր հանձնաժողովի նախագահը չէր էլ ցանկանում նայել ներկայացված ապրանքներին, և իբր չէր ենթարկվում իր իսկ ղեկավարության այն պահանջներին, որ ուսումնասիրեր և ընդուներ մատակարարված ապրանքները և նույնիսկ չէր մասնակցում քննարկմանը:

Հուլիսի 19-ին գրություն հղեցինք ՀՀ ՊՊԾ պետին, որպեսզի օբյեկտիվ լուծում տրվի այս անհիմն ձգձգումներին և քաշքշուկներին,և ընդունվի գոնե իրենց կողմից հավանած ապրանքատեսակները, հուլիսի 21-ին գրություն ենք ստանում, որ միակողմանի լուծել պայմանագիրը: Երբ որ նայում ես ՊՊԾ-ի վերջին 10 տարվա հանդերձանքի մրցույթների արդյունքներին ակնհայտ երևում է, որ վերը նշված ապրանքների մասով միշտ հաղթել է միայն մեկ կազմակերպություն, այս անգամ էլ արվում է ամեն ինչ՝ դարձյալ մատակարարումը հանձնելու տվյալ կազմակերպությանն, այսինքն մրցույթով 2-րդ տեղ զբաղեցնող կազմակերպությանը, որով պետությանը տալիս են 4.352.820 դրամի վնաս, իսկ «Պահապան» ՍՊԸ-ին 12.361.380 դրամի վնաս՝ չհաշված տույժերն ու տուգանքները:

Հետևությունը թողնում ենք Խորհրդին:

Գնումների բողոքարկման խորհրդին խնդրում ենք արտադրված ապրանքների տեխնիկական պայմանին համապատասխանելիությունը ճշտելու համար տալ անկախ փորձագետների»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Զոհրակ Սողոմոնյանը և Ալեքսանդր Հայրապետյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/26 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 04.08.2017թ. թիվ 03/27-1/14260-17 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պետական պահապանության ծառայության 21.07.2017թ. թիվ 19/754 գրությունը, ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01 գնման

ընթացակարգի հրավերը, ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 04.07.2017թ. թիվ 2, 13.07.2017թ. թիվ 3 և 17.07.2017թ. թիվ 4 արձանագրությունները, ՀՀ պետական պահապանության ծառայության Խորհրդին ուղղված 16.08.2017թ. թիվ 19/834 գրությունը, ՀՀ պետական պահապանության ծառայության «Պահապան» ՍՊԸ-ն ողղված 12.07.2017թ. թիվ 19/717 և 19.07.2017թ. թիվ 19/746 գրությունները, ՀՀ պետական պահպանության ծառայության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.04.2017թ կնքված N ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-3 ծածկագրով պայմանագիրը, «Պահապան» ՍՊԸ-ի 17.08.2017թ. Խորհրդին ուղղված գրությունը, Պատվիրատուի հայտնած կարծիքը և դիրքորոշումը.

ՀՀ պետական պահապանության ծառայության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.04.2017թ կնքվել է N ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-3 ծածկագրով հանդերձանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը («Պահապան» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հանդերձանք (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3):

Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Նույն Պայմանագրի 3.1.7.1 կետի ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. 2-րդ եռամսյակում մատակարարել թվով 14 անվանում ապրանք:

Համաձայն Պատվիրատուի ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից 04.07.2017թ. կազմված N1 արձանագրության՝ 30.06.2017թ. «Պահապան» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՊԾ իրային պահեստ է մատակարարվել՝ ամենօրյա կիսաբրդյա գլխարկ, կիտել ամենօրյա և ազատթող փողքերով տաբատ, բաճկոն հանովի ուսադիրներով և ազատթող փողքերով տաբատ, կոստյում ձմեռային մորթե օձիքով, վերնաշապիկներ, կոստյում ամառային գունաքողարկված կտորից, կիսավերարկու, կեպի և ուսադիրներ:

Հանձնաժողովը պարզելով, որ ապրանքներն ունեն բազմաթիվ թերություններ և չեն համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին, տվել է հետևյալ եզրակացությունը. քանի որ ստուգված ապրանքատեսակները չեն համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին և ունեն բազմաթիվ թերություններ, ուստի վերը նշված 30.06.2017թ. մատակարարված ամբողջ խմբաքանակը հետ է վերադարձվում մատակարարին:

ՀՀ Պետական պահպանության ծառայությունը «Պահապան» ՍՊԸ-ին ուղղված՝ 12.07.2017թ. թիվ 19/717 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ Պետական պահապանության ծառայության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.04.2017թ կնքված NՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-3 պայմանագրի դրույթները և 2017թ. հուլիսի 4-ին վերը նշված կողմերի միջև կազմված N 1 արձանագրությունը՝ 18.07.2017թ. վերը նշված պայմանագրով նախատեսված ապրանքների ամբողջ չափաքանակը (թերությունները վերացված) չմատակարարելու դեպքում պայմանագիրը միակողմանի կլուծվի:

Համաձայն Պատվիրատուի կողմից 13.07.2017թ. կազմված N2 արձանագրության՝ 30.06.2017թ.-ին «Պահապան» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՊԾ իրային պահեստ է մատակարարվել՝ ամենօրյա կիսաբրդյա գլխարկ, կիտել ամենօրյա և ազատթող փողքերով տաբատ, բաճկոն հանովի ուսադիրներով և ազատթող փողքերով տաբատ, կոստյում ձմեռային մորթե օձիքով, վերնաշապիկներ, կոստյում ամառային գունաքողարկված կտորից, կիսավերարկու, կեպի և ուսադիրներ:

Հանձնաժողովը դարձյալ պարզելով, որ ապրանքներն ունեն բազմաթիվ թերություններ և չեն համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին, տվել հետևյալ եզրակացությունը. քանի որ ստուգված ապրանքատեսակները չեն համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին և ունեն բազմաթիվ թերություններ, ուստի վերը նշված 13.07.2017թ.մատակարարված ամբողջ խմբաքանակը արդեն երկրորդ անգամ հետ է վերադարձվում մատակարարին:

Համաձայն Պատվիրատուի կողմից 17.07.2017թ. կազմված N3 արձանագրության՝ Պահապան» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՊԾ իրային պահեստ է մատակարարվել՝ ամենօրյա կիսաբրդյա գլխարկ, կիտել ամենօրյա և ազատթող փողքերով տաբատ, բաճկոն հանովի ուսադիրներով և ազատթող փողքերով տաբատ, կոստյում ձմեռային մորթե օձիքով, վերնաշապիկներ, կոստյում ամառային գունաքողարկված կտորից, կիսավերարկու, կեպի և ուսադիրներ:

Նույն արձանագրությամբ Պատվիրատուն արձանագրել է, որ 04.07.2017թ. կազմվել է արձանագրություն, համաձայն որի 30.06.2017թ. բերված ապրանքը հետ է վերադարձվել, որը պայմանագրով նախատեսված ամբողջ խմբաքանակը չէր:

Մատակարարին տրվել էր ողջամիտ ժամկետ, որի ընթացքում պետք էր վերացնել թերությունները և մատակարարել ապրանքի ամբողջ խմբաքանակը, սակայն 13.07.2017թ. ապրանքը մատակարարվեց ոչ ամբողջությամբ և թերություններով, 17.07.2017թ. արդեն երրորդ անգամ մատակարարվեց պայմանագրով նախատեսված ապրանքը ոչ ամբողջությամբ և թերություններով, մասնավորապես՝ բացակայում էին ականջակալներով ոչխարի մորթուց գլխարկները:

Հանձնաժողովը դարձյալ պարզել է, որ ապրանքներն ունեն բազմաթիվ թերություններ և չեն համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին, և տվել հետևյալ եզրակացությունը. քանի որ ստուգված ապրանքատեսակները չեն համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին և ունեն բազմաթիվ թերություններ, ուստի վերը նշված 17.07.2017թ.մատակարարված ամբողջ խմբաքանակը արդեն երրորդ անգամ հետ է վերադարձվում մատակարարին:

ՀՀ Պետական պահապանության ծառայությունը 19.07.2017թ. թիվ 19/746 գրությամբ դիմել է «Պահապան» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ համաձայն ՀՀ Պետական

պահապանության ծառայության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.04.2017թ կնքված N ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-3 պայմանագրի՝ մինչև 30.06.2017թ. Ընկրության կողմից պետք է մատակարարվեր ամենօրյա կիսաբրդյա գլխարկ, ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց, կիտել ամենօրյա և ազատթող փողքերով տաբատ, բաճկոն հանովի ուսադիրներով և ազատթող փողքերով տաբատ, կոստյում ձմեռային արհեստական մորթե օձիքով, երկարաթև սպիտակ վերնաշապիկ, կարճաթև սպիտակ վերնաշապիկ, կարճաթև դեղնականաչավուն վերնաշապիկ, կոստյում ամառային գունաքողարկված կտորից, կիսավերարկու, կեպի, ուսադիր ամենօրյա ենթասպայական կազմի համար, ուսադիր ամենօրյա հանովի և դնովի ենթասպայական կազմի համար, որոնք մատակարարվել են բազմաթիվ թերություններով (N1, N2, N3 արձանագրությունները կցվել են):

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջները, և կողմերի միջև կազմված N1, N2, N3 արձանագրությունները՝ ՀՀ Պետական պահապանության ծառայությունը 19.07.2017թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Հաշվի առնելով, որ վերը նշված արձանագրությունները պարունակում էն «Պահապան» ՍՊԸ-ի կողմից ապրանքի մատակարարման վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն, ուստի Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Խորհուրդը ՀՀ Պետական պահապանության ծառայությունից պահանջեց ներկայացնել Ընկերության կողմից N ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-3 պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ առավել հանգամանալից և առարկայական դիրքորոշում:

Ի պատասխան Խորհրդի վերը նշված պահանջի՝ Պատվիրատուն 19.07.2017թ. թիվ 19/834 գրությամբ Խորհրդին հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ Պետական պահպանության ծառայության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.04.2017թ. կնքված N ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-03 պայմանագրի՝ մինչև 30.06.2017թ. «Պահապան» ՍՊԸ-ն պետք է մատակարարեր՝ ամենօրյա կիսաբրդյա գլխարկ, ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց, կիտել ամենօրյա և ազատթող փողքերով տաբատ, բաճկոն հանովի ուսադիրներով և ազատթող փողքերով տաբատ, կոստյում ձմեռային արհեստական մորթե օձիքով, երկարաթև սպիտակ վերնաշապիկ,

կարճաթև սպիտակ վերնաշապիկ, կարճաթև դեղնականաչավուն վերնաշապիկ, կոստյում ամառային գունաքողարկված կտորից, կիսավերարկու, կեպի, ուսադիր ամենօրյա ենթասպայական կազմի համար, ուսադիր ամենօրյա հանովի և դնովի ենթասպայական կազմի համար:

30.06.2017թ. «Պահապան» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է N ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-03 պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, որը ամբողջ խմբաքանակը չէր, մասնավորապես՝ բացակայում էր ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց ապրանքատեսակը ամբողջությամբ և կոստյում ամառային գունաքողարկված կտորից ապրանքատեսակի 157 լրակազմ: Պայմանագրով նախատեսված է եղել բոլոր զինծառայողների համար անհատական կար, որը ևս կարված էր բազմաթիվ թերություններով և չէր համապատասխանում զինծառայողների իրական չափերին:

Իսկ մնացած ապրանքատեսակներն ունեին բազմաթիվ թերություններ, մասնավորապես՝

1. Ամենօրյա կիսաբրդյա գլխարկների վրա ոսկեզօծ զարդապարանի փոխարեն տեղադրված էր դեղին պարան, որը նախորոք համաձայնեցված նմուշին չէր համապատասխանում, իսկ գլխարկը կարված էր բազմաթիվ թերություններով:

2. Կիտել ամենօրյա և ազատթող փողքերով տաբատ ապրանքատեսակի աստառները տարբերվում են միմյանցից: Տաբատի աստառը չի համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին: Տաբատների գրպանացուները տարբեր գույների են: Կիտելի 3-րդ կոճակի վրա բացակայում է պիտակը իր նշումներով:

3. Բաճկոն հանովի ուսադիրներով և ազատթող փողքերով տաբատ ապրանքատեսակի բաճկոնի կոճակները ոսկեգույն են պաշտպանականի փոխարեն, տաբատների աստառները տարբերվում են բաճկոնի աստառներից և չեն համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին, բացակայում են պիտակները համապատասխան նշումներով:

4. Վերնաշապիկների վրա բացակայում են պիտակները համապատասխան նշումներով, ինչպես նաև վերնաշապիկների մի մասի վրա բացակայում են զինծառայողների անուն ազգանունները:

Քանի որ ՀՀ ՊՊԾ հանձնաժողովը զննելով 30.06.2017թ. «Պահապան» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները հայտնաբերել էր վերը նշված թերությունները, ուստի մատակարարված ամբողջ խմբաքանակը 04.07.2017թ. ետ է վերադարձվել մատակարարին՝ կազմելով N1 արձանագրությունը, որը մատակարարը ստորագրել է:

Սույն թվականի հուլիսի 12-ին ՀՀ ՊՊԾ տնտեսական բաժանմունքի իրային ապահովման խմբի պահեստապետ Ա.Ափոյանը և ՀՀ տնտեսական բաժանմունքի իրային ապահովման խմբի սպա լեյտենանտ Ժ.Կուպալյանը առձեռն հանձնել են N 19/717 գրությունը, որում ասվում է, որ «Պահապան» ՍՊԸ-ին տրվում է լրացուցիչ 18 օր ժամանակ՝ մինչև 18.07.2017թ., որպեսզի N ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-03 պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվեն ամբողջովին և թերությունները լինեն վերացված: Չմատակարարելու դեպքում պայմանագիրը միակողմանի կլուծարվի: Գրությունը հանձնելուց հետո Ա. Ալեքսանյանը առաջարկեց հանդիպել ոմն Գագիկ Կոստանյանի հետ, որին ինքը ներկայացրեց իբրև իր տնօրեն, ինչից, սակայն, մենք հրաժարվեցինք:

Սույն թվականի հուլիսի 13-ին մատակարարը նորից ներկայացրել է պայմանագրով նախատեսված ապրանքների ոչ ամբողջական քանակը և նորից թերություններով, մասնավորապես, բացակայում էին ամենօրյա կիսաբրդյա գլխարկները, որոնք 30.06.2017թ. մատակարարվել էին թերություններով, ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց ապրանքատեսակը, կոստյում ամառային գունաքողարկված կտորից ապրանքատեսակի 157 լրակազմ: Պայմանագրով նախատեսված է եղել բոլոր զինծառայողների համար անհատական կար, որը ևս կարված էր բազմաթիվ թերություններով և չէր համապատասխանում զինծառայողների իրական չափերին: մանացած ապրանքատեսակները ունեին բազմաթիվ թերություններ, մասնավորապես՝

1. Բաճկոն հանովի ուսադիրներով և ազատթող փողքերով տաբատ ապրանքատեսակի բաճկոնի գրպանները անհավասար են կարված և ոչ սիմետրիկ, բացակայում են պիտակները համապատասխան նշումներով:

2. Վերնաշապիկների վրա բացակայում են պիտակները համապատասխան նշումներով, ինչպես նաև վերնաշապիկների մի մասի վրա բացակայում են զինծառայողների անուն ազգանունները:

Քանի որ ՀՀ ՊՊԾ հանձնաժողովը զննելով 13.06.2017թ. «Պահապան» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները հայտնաբերել էր վերը նշված թերությունները, ուստի մատակարարված ամբողջ խմբաքանակը 13.07.2017թ. ետ է վերադարձվել մատակարարին՝ կազմելով N2 արձանագրությունը, որը մատակարարը հրաժարվել է ստորագրելուց:

Սույն թվականի հուլիսի 17-ին մատակարարը նորից ներկայացել է պայմանագրով նախատեսված ապրանքների ոչ ամբողջական քանակը և նորից թերություններով, մասնավորապես՝ բացակայում էր ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց ապրանքատեսակը: Պայմանագրով նախատեսված է եղել բոլոր զինծառայողների համար անհատական կար, որը ևս կարված էր բազմաթիվ թերություններով և չի համապատասխանուն զինծառայողների իրական չափերին: Մնացած ապրանքատեսակները ունեին բազմաթիվ թերություններ, մասնավորապես՝

1. Բաճկոն հանովի ուսադիրներով և ազատթող փողքերով տաբատ ապրանքատեսակի բաճկոնի գրպանները անհավասար են կարված և ոչ սիմետրիկ, բացակայում են պիտակները համապատասխան նշումներով:

2. Վերնաշապիկների վրա բացակայում են պիտակները համապասխան նշումներով, ինչպես նաև վերնաշապիկների մի մասի վրա բացակայում են զինծառայողների անուն ազգանունները:

Քանի որ ՀՀ ՊՊԾ հանձնաժողովը՝ զննելով 17.07.2017թ. «Պահապան» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները, հայտնաբերել էր վերը նշված թերությունները, ուստի մատակարարված ամբողջ խմբաքանակը 17.07.2017թ. ետ է վերադարձվել մատակարարին՝ կազմելով N3 արձանագրությունը, որը մատակարարը հրաժարվել է ստորագրելուց:

Սույն թվականի հուլիսի 18-ին մատակարարը նորից ներկայացրել է պայմանագրով նախատեսված ապրանքների ոչ ամբողջական քանակը և նորից թերություններով, մասնավորապես՝ բացակայում էր ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց

ապրանքատեսակը և ամենօրյա կիսաբրդյա գլխարկները: Պայմանագրով նախատեսված է եղել բոլոր զինծառայողների համար անհատական կար, որը ևս կարված էր բազմաթիվ թերություններով և չէր համապատասխանուն զինծառայողների իրական չափերին:

Մնացած ապրանքատեսակները ունեին բազմաթիվ թերություններ, մասնավորապես՝

1. Բաճկոն հանովի ուսադիրներով և ազատթող փողքերով տաբատ ապրանքատեսակի բաճկոնի գրպանները անհավասար են կարված և ոչ սիմետրիկ, բացակայում են պիտակները համապատասխան նշումներով:

2. Վերնաշապիկների վրա բացակայում են պիտակները համապասխան նշումներով, ինչպես նաև վերնաշապիկների մի մասի վրա բացակայում են զինծառայողների անուն ազգանունները:

Քանի որ ՀՀ ՊՊԾ հանձնաժողովը՝ զննելով 18.07.2017թ. «Պահապան» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները հայտնաբերել էր վերը նշված թերությունները, ուստի մատակարարված ամբողջ խմբաքանակը 18.07.2017թ. ետ է վերադարձվել մատակարարին:

19.07.2017թ. «Պահապան» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանը գրություն էր ուղարկել ՀՀ ՊՊԾ պետ գեներալ-լեյտենանտ Հ. Հարությունյանին՝ ըստ որի սույն թվականի հունիսի 30-ին իբրև թե մատակարարվել է պայմանագրով նախատեսված ամբողջ խմբաքանակը՝ բացառությամբ ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց ապրանքատեսակից: Գրության մեջ նշվում է նաև, որ սույն թվականի հուլիսի 17-ին իբրև թե բոլոր դիտողությունները հաշվի առնելով ապրանքատեսակները ամբողջությամբ մատակարարվել են:

Սակայն, սույն թվականի հունիսի 30-ին բացի ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց ապրանքատեսակից, չի մատակարավել նաև 157 լրակազմ կոստյում ամառային գունաքողարկված կտորից ապրանքատեսակը: Իսկ սույն թվականի հուլիսի 17-ին պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվել են ոչ ամբողջությամբ:

Սույն թվականի հուլիսի 19-ին պայմանագիրը միակողմանի լուծարվել է»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ

(կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Պահապան» ՍՊԸ-ն կնքել է ՀՀ Պետական պահապանության ծառայության հետ հանդերձանքի գնման պայմանագիր, սակայն վերջինիս չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ (այսուհետ՝ Կարգ)

- 95-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:
- 96-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Նույն կետում նշված անձը տալիս է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին (...):

Պայմանագրի՝

- 6.1 կետի Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին (Ստացողին)՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:
- 6.2 կետի համաձայն՝ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության

ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

• 6.4 կետի համաձայն՝ Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01 գնման ընթացակարգի հրավերի 4.1 կետի համաձայն՝ նույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Համակարգի միջոցով Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ: Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Խորհուրդն՝ ուսումնասիրելով Պատվիրատուի 19.07.2017թ. թիվ 19/834 գրությամբ հայտնած դիրքորոշումը և պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստին վերջինիս արտահայտած կարծիքը, արձանագրում է, որ N ՀՀ ՊՊԾ-ՇՀԱՊՁԲ-15/10-01-3 պայմանագրով նախատեսված՝ թվով 14 անվանում ապրանքից «Պահապան» ՍՊԸ-ի կողմից թերություններով են մատակարարվել կամ ամբողջությամբ չեն մատակարարվել թվով 6 անվանում ապրանք (ամենօրյա կիսաբրդյա գլխարկ, ականջակալներով գլխարկ ոչխարի մորթուց, կիտել ամենօրյա և ազատթող փողքերով տաբատ, բաճկոն հանովի ուսադիրներով և ազատթող փողքերով տաբատ, երկարաթև սպիտակ վերնաշապիկ, կոստյում ամառային գունաքողարկված կտորից): Ինչ վերաբերում է մնացյալ 8 անվանում ապրանքի, ապա դրանց չմատակարարման կամ թերի մատակարարման մասին Պատվիրատուի կողմից որևէ նշում չի արվել, մինչդեռ նշված ապրանքները՝ սահմանված ժամկետում մատակարարված լինելով և համապատասխանելով Պայմանագրի տեխնիկական բնութագրի պայմաններին՝

Պատվիրատուի կողմից ևս չեն ընդունվել և ետ են վերադարձվել Ընկերությանը՝ այն պատճառաբանությամբ, որ դրանք կազմել են Պայմանագրով նախատեսված ապրանքի փոքր մասը:

Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուի և Ընկերության միջև Պայմանագրի 4.1 հավելվածով նախատեսված հանձնման-ընդունման որևէ արձանագրություն չի ստորագրվել, Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը երկկողմ հաստատված որևէ փաստաթղթով չի ֆիքսվել:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն՝ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան մատակարարված ապրանքը չընդունելով՝ խախտել է Կարգի 96-րդ կետով, ինչպես նաև Հրավերի 4.1 կետով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդը գտնում է, որ «Պահապան» ՍՊԸ-ն պայմանագրով նախատեսված ապրանքը սահմանված ժամկետում չմատակարարելով՝ խախտել է պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.08.2017թ. «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**